

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

Սույն հոդվածում դիտարկվում են նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի թարգմանությանը ներկայացվող միջազգային և ազգային արդի պահանջները: Ուսումնասիրելով միջազգային և ազգային փորձը՝ կարելի է ասել, որ նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի թարգմանությունը՝ հատուկ հմտություններ և որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածություն պահանջող, մի քանի փուլերով կատարվող աշխատանք է, որը ճիշտ և համակարգված կերպով իրականացնելու դեպքում հնարավոր է ավելի բարձրացնել թարգմանությունների որակը և հեշտացնել թարգմանչական հետագա աշխատանքները:

Բանալի բառեր. միջազգային ստանդարտ, ազգային ստանդարտ, թարգմանության գործընթաց, թարգմանության գործընթացի մասնակիցներ, թարգմանչի մասնագիտական հմտություններ և որակավորում, տերմինների հետևելիություն

Նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո՝ Հայաստանի տնտեսական և արդյունաբերական կապերը, թեկուզ նախկին Խորհրդային միության կազմում գտնվող երկրների հետ կտրվեցին: Սակայն այսօր, ունենալով գիտական և արդյունաբերական լուրջ ներուժ, Հայաստանը միջազգային բուռն համագործակցություն է իրականացնում՝ թե՛ փորձի փոխանակման, թե՛ ներդաշնակեցման, և թե՛ անդամակցության շրջանակներում և նման միջմշակութային և նեղ մասնագիտական հաղորդակցության մեջ պետք է հույժ կարևորել **որակյալ և պատշաճ մակարդակով** իրականացվող թարգմանության անհրաժեշտությունը:

Սույն հոդվածում տեխնիկական, ինչպես նաև նեղ մասնագիտական տեքստերի թարգմանությունը կդիտարկվի գործնական և կիրառական տեսանկյունից: Թարգմանությունը ծառայություն է և գործընթաց, ու այդ ծառայությանը և գործընթացին ներկայացվում են միջազգային և ազգային պահանջներ:

Տեխնիկական և նեղ մասնագիտական տեքստերը որոշակի համակարգում գործող տեքստեր են, որոնք չեն պահանջում անհատական մոտեցում, չունեն անհատական ոճ և հիմքեր: Ուստի նման տեքստերը մշակելու և թարգմանելու գործընթացը պետք է լինի համակարգված, որն էլ կհեշտացնի թարգմանության գործընթացի մասնակիցների աշխատանքը:

Թարգմանչական գործընթացի միասնականություն և թարգմանված տեքստերում առկա տերմինների հետևելի-

ուրջուն ապահովելու նպատակով՝ այսօր միջազգային մակարդակում ձգտում են համակարգել թարգմանչական ծառայությունների մատուցման գործընթացը՝ մշակելով մի շարք միջազգային, եվրոպական և ազգային ստանդարտներ և ուղղեցույցներ, որոնք հստակ պահանջներ են սահմանում տերմինաբանական աշխատանքների և թարգմանության, տեքստի կառուցվածքային, ոճաբանական, քերականական առանձնահատկությունների, ինչպես նաև, թարգմանչական ծառայությունների մատուցման համար: Տվյալ ոլորտին վերաբերող՝ գոյություն ունեցող և գործող փաստաթղթերի մի քանի օրինակ.

- ISO 704:2009 Terminology work -- Principles and methods
- ISO 860:2007 Terminology work -- Harmonization of concepts and terms
- ISO/TS 11669:2012 Translation projects -- General guidance
- EN 15038:2006 Translation services – Service requirements
- European Commission Directorate-General for Translation, English Style Guide. *A handbook for authors and translators in the European Commission*
- ՀՍ ԵՆ 15038-2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» ՀՀ ստանդարտ, և այլն:

2008 թվականի հունվարի 22-ից հաստատվել է և գործողության մեջ դրվել ՀՍՏ ԵՆ 15038:2007 «Թարգմանչական ծառայություններ. Ծառայության պահանջներ» ՀՀ ստանդարտը, որը ներկայացնում է EN 15038:2006 «Translation services – Service requirements» ստանդարտի բնագրաբնույթ տեքստը՝ նույնական (IDT) համապատասխանության աստիճանով:

Տվյալ ստանդարտով սահմանվում են թարգմանչական ծառայություն մատուցողներին (ԹԾՄ), այդ թվում մարդկային և տեխնիկական ռեսուրսներին, որակին և նախագծի կառավարմանը, ինչպես նաև պայմանագրային ոլորտին և ծառայության մատուցման ընթացակարգերին ներկայացվող պահանջները: Այսինքն պահանջներ, որոնք ներկայացվում են թարգմանչական ողջ գործընթացին՝ սկսած աշխատանքի ընդունումից մինչև հանձման պահը, ինչպես նաև, թարգմանչի որակավորմանը, գործընթացի մասնակիցներին, փաստաթղթի հետ աշխատելու կարգին և անհրաժեշտ տեխնիկական միջոցներին:

Համաձայն ՀՍՏ ԵՆ 15038:2007 ստանդարտի թարգմանչական գործընթացի մասնակիցներն են՝ թարգմանիչը, վերանայողը, խմբագիրը և նախագծի ղեկավարը:

1. Թարգմանիչների մասնագիտական հմտություններ և որակավորում

3.2.2 Թարգմանչի մասնագիտական իրազեկությունները

Թարգմանիչներն ունեն արժվագն հետևյալ իրազեկությունները

ա) Թարգմանելու իրազեկություն. Թարգմանելու իրազեկությունն նշանակում է պահանջվող մակարդակով՝ համաձայն 5.4 կետի, տեքստեր թարգմանելու կարողություն: Այն ընդգրկում է տեքստը հասկանալու և տեքստի պատրաստման հետ կապված խնդիրների գնահատման, ինչպես նաև պատվիրատու – ԹԾՄ պայմանագրի (տես 4.4 կետը) համաձայն թիրախ տեքստի ներկայացման և արդյունքների հիմնավորման կարողությունը:

ՀՍԵ ԵՆ 15038:2007 ստանդարտի 5.4 կետը «**Թարգմանչական գործընթացը**» կբերվի ստորև: Վերոնշյալից կարող ենք ենթադրել, որ թարգմանիչը պետք է կարողանա աշխատել նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի հետ, ինչի համար անհրաժեշտ է երկու տարբեր լեզվով և երկու տարբեր մշակույթում առկա տեքստերի թե՛ կառուցվածքային, թե՛ լեզվաբանական որակների գերազանց իմացություն:

4.4 Պատվիրատու – ԹԾՄ պայմանագիր

ԹԾՄ-ն ծառայության մատուցման համար պայմանագիր է կնքում պատվիրատուի հետ: Այդ պայմանագրով ամրագրվում են առևտրային պայմաններն ու ծառայության մանրամասները: Պայմանագրով կարող են ամրագրվել նաև.

- հեղինակային իրավունքը,*
- պատասխանատվությունը,*
- գաղտնիությունը,*

- վեճերի կարգավորումը,
- որակի ապահովումը:

Պայմանագրից ցանկացած և բոլոր հետագա շեղումները պետք է համաձայնեցվեն կողմերի միջև՝ գրավոր տեսքով:

«Պատվիրատու – ԹԾՄ պայմանագրի համաձայն թիրախ տեքստի ներկայացման և արդյունքների հիմնավորման կարողությունը» ցույց է տալիս, որ նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի թարգմանության ժամանակ առաջնային է համարվում տեքստի նպատակը, դերը և պատվիրատուի/ընթերցողի գործոնը՝ համաձայն նախնական պայմանավորվածության:

բ) Սկզբնաղբյուր և թիրախ լեզուներում լեզվաբանական և տեքստային իրազեկություններ. Լեզվաբանական և տեքստային իրազեկություններն ընդգրկում են սկզբնաղբյուր լեզուն հասկանալու կարողությունը և թիրախ լեզվի գերազանց տիրապետումը: Տեքստային իրազեկությունը պահանջում է հնարավորինս մեծ թվով ոլորտների՝ մասնագիտական և ոչ մասնագիտական (ստանդարտ լեզու) տեքստերի տեքստային պայմանականությունների իմացություն և ընդգրկում է տեքստերի պատրաստման ժամանակ այդ գիտելիքների կիրառման կարողությունը:

գ) Հետազետություն իրականացնելու իրազեկություն, տեղեկությունների ձեռք բերում և մշակում. Հետազոտություն իրականացնելու իրազեկությունը ընդգրկում է

սկզբնաղբյուր տեքստը հասկանալու և թիրախ տեքստը պատրաստելու համար անհրաժեշտ լրացուցիչ լեզվաբանական և մասնագիտական գիտելիքներն արդյունավետորեն ձեռքբերելու կարողությունը: Հետազոտությունն իրականացնելու իրազեկությունը պահանջում է նաև հետազոտական միջոցների կիրառման փորձ և առկա տեղեկատվական աղբյուրներից արդյունավետորեն օգտվելու համար համապատասխան ռազմավարություն մշակելու կարողություն:

դ) **Մշակութային իրազեկություն.** Մշակութային իրազեկությունը ներառում է սկզբնաղբյուր և թիրախ մշակույթներին բնորոշ տեղային առանձնահատկությունների, վարքագծի չափորոշիչների և արժեքների վերաբերյալ տեղեկություններից օգտվելու կարողությունը:

ե) **Տեխնիկական իրազեկություն.** Տեխնիկական իրազեկությունն ընդգրկում է թարգմանությունների մասնագիտական նախապատրաստման և պատրաստման համար պահանջվող կարողություններն ու հմտությունները: Այն ներառում է 3,3 կետում սահմանված տեխնիկական ռեսուրսների կառավարման կարողությունը:

Վերոհիշյալ իրազեկությունները դրսևորվում են ստորև տրված պահանջներից մեկի կամ մի քանիսի առկայությամբ.

- բարձրագույն թարգմանչական կրթություն (ճանաչված աստիճան),

– որևէ այլ ոլորտում հավասարազոր որակավորում, ինչպես նաև թարգմանության ոլորտում առնվազն 2 տարվա փաստացի փորձ,

– թարգմանության ոլորտում առնվազն 5 տարվա փորձ:

2. Վերանայողների մասնագիտական հմտություններ և որակավորում

3.2.3 Վերանայողների մասնագիտական իրազեկությունները

Վերանայողներն ունեն 3.2.2 կետով սահմանված իրազեկությունները, ինչպես նաև տվյալ բնագավառում թարգմանության փորձ:

3. Խմբագիրների մասնագիտական հմտություններ և որակավորում

3.2.4 Խմբագիրների մասնագիտական իրազեկությունները

Խմբագիրները հանդիսանում են թիրախ լեզվի՝ տվյալ բնագավառի մասնագետներ:

3.2.5 Շարունակական մասնագիտական զարգացումը

ԹԾՄ-ն ապահովում է 3.2.2 կետով սահմանված մասնագիտական իրազեկությունների պահպանումն ու կատարելագործումը:

4. Նախագծի դեկավար

Նախագծի ղեկավարը ապահովում է թարգմանչական գործընթացի իրականացման կարգը և որակը:

Համաձայն ՀՍ ԵՆ 15038:2007 ստանդարտի թարգմանչական գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից:

5.4 Թարգմանչական գործընթացը

5.4.1 Թարգմանությունը

Թարգմանիչը փոխանցում է սկզբնաղբյուր տեքստի իմաստը թիրախ լեզվով, որպեսզի ստանա այնպիսի տեքստ, որը համապատասխանում է թիրախ լեզվի լեզվաբանական համակարգի կանոններին և նախագծի հանձնարարման ընթացքում ստացված ցուցումներին (տես 5.3.1.2):

Այս գործընթացում թարգմանիչն ուշադրություն է դարձնում հետևյալ հայեցակետերին.

ա) տերմինաբանությանը. Ոլորտին բնորոշ և պատվիրատուի նախընտրած կամ տրամադրված որևէ այլ տերմինաբանության հետ համապատասխանություն և թարգմանության մեջ տերմինների միասնական կիրառում,

բ) քերականությանը. Շարահյուսություն, ուղղագրություն, կետարդրություն, ուղղատպագրություն, տարբերակիչ նշաններ,

գ) բառակազմին. Բառային կապակցվածություն և դարձվածքաբանություն,

դ) ոճին. Մեփական կամ պատվիրատուի ոճական ուղղեցույցին համապատասխանություն, ներառյալ բառաշերտը և լեզվաշերտը,

ե) տեղային առանձնահատկություններին. Տեղային պայմանականություններ և տարածաշրջանային չափորոշիչներ,

զ) ձևաչափին (տես Դ հավելվածը),

է) թարգմանության թիրախ խմբին և նպատակին:

5.4.2 Ստուգումը

Նախնական թարգմանության ավարտից հետո թարգմանիչն ստուգում է իր աշխատանքը: Այս գործընթացում ստուգվում է, թե արդյոք չկան բացթողումներ կամ սխալներ, պահպանվել են իմաստն ու ծառայության մատուցման համար սահմանված մանրամասներն (քննությամբ): Թարգմանիչը կատարում է բոլոր անհրաժեշտ փոփոխությունները:

5.4.3 Վերանայումը

ԹԾՄ-ն ապահովում է թարգմանության վերանայումը:

Վերանայումն (տես 3.2.3 կետը) իրականացնում է այլ անձ, որն ունի սկզբնաղբյուր և թիրախ լեզուների համապատասխան գիտելիքներ: Վերանայողն ուսումնասիրում է թարգմանությունը՝ դրա նպատակին համապատասխանության մասով: Այն իր մեջ ներառում է սկզբնաղբյուր և

թիրախ տեքստերի համեմատությունը՝ տերմինաբանության միասնականության, բառաշերտի և ոճի մասով:

Վերանայողի առաջարկությունների հիման վրա ԹԾՄ-ն աշխատանքներ է նախաձեռնում անհրաժեշտ շտկման միջոցառումների իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Ծանոթություն: Շտկման միջոցառումները կարող են ներառել նաև տեքստի վերաթարգմանություն:

5.4.4 Խմբագրումը

Եթե ծառայության մատուցման բնութագրերում նախատեսված են նաև խմբագրման աշխատանքներ, ապա ԹԾՄ-ն ապահովում է թարգմանության խմբագրումը: Խմբագիրը (տես 3.2.4 կետը) իրականացնում է միալեզու խմբագրում՝ սահմանված նպատակին թարգմանության համապատասխանությունը գնահատելու և շտկման միջոցառումներ առաջարկելու համար:

Ծանոթություն: Խմբագրումը ենթադրում է բառաշերտի և տվյալ ոլորտի պայմանականությունների պահպանման մասով թարգմանության գնահատումը:

Խմբագրի առաջարկությունների հիման վրա ԹԾՄ աշխատանքներ է նախաձեռնում շտկման միջոցառումների իրականացումն ապահովելու ուղղությամբ:

5.4.5 Սրբագրումը

Եթե ծառայության մատուցման բնութագրերը ներառում են նաև սրբագրման աշխատանքներ, ապա ԹԾՄ-ն ապահովում է տեքստի սրբագրումը:

5.4.6 Տեքստի վերջնական հաստատումը

ԹԾՄ-ն հաստատում է, որ մատուցված ծառայությունը համապատասխանում է ծառայության մատուցման բնութագրերին:

Նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի թարգմանությունը մի քանի փուլերով իրականացվող աշխատանք է, որը պահանջում է հատուկ հմտություններ և որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածություն: Թարգմանչական վերոնշյալ համակարգված գործընթացը ճիշտ իրականացնելու արդյունքում, կարելի է՝

- բարելավել տերմինաբանական տվյալների բազան, թույլ տալով դրա հետագա կիրառումը
- ապահովել տեխնիկական թարգմանության միասնականությունը, հետևելի տերմինների առկայության միջոցով (ազգային և միջազգային մակարդակներում)
- բարձրացնել թարգմանության և մատուցած ծառայության որակը
- իրականացնել և՛ միջազգային, և՛ ազգային մակարդակում ընդունելի և ճանաչելի թարգմանություններ:

Այսպիսով, նման միջմշակութային և նեղ մասնագիտական հաղորդակցության մեջ պետք է ջանք չինայել միջազգային և ազգային մակարդակներով ներկայացված պահանջներին համապատասխանող որակյալ թարգմանություն ապահովելու գործընթացում, քանի որ թարգմանությունը կամուրջ է միջմշակութային և մասնագիտական հաղորդակցության մեջ:

Վերոնշյալ ստանդարտում առկա որոշ տերմիններ վերանայման կարիք ունեն, քանի որ չեն արտահայտում բնագիր տերմինի բուն իմաստը և ընդգրկուն չեն:

Anna Sahakyan

YSU

International and National Requirements for the Process of Technical Translation

Current international and national requirements referring to the translation of specialized and technical texts are considered in this article. Having studied the international and national practice it is possible to state that the translation of specialized and technical texts which requires highly competent specialists is a multi staged process, in the result of accurate and systematized performance of which it is possible to improve the quality of translations and to facilitate further translation processes.

Key words: International standard, national standard, translation process, participants of translation process, professional competencies of a translator, traceability of terms.

Анна Саакян

ЕГУ

Международные и национальные требования предъявляемые к процессу технического перевода

В данной статье рассматриваются национальные и международные требования, предъявляемые к переводам специализированных и технических текстов. Опираясь на международный и национальный опыт, можно сказать, что перевод специализированных и технических текстов – это работа, которая осуществляется в несколько этапов и требует специалистов, имеющих соответствующие навыки и квалификацию в этой области. При правильном и системном осуществлении переводов возможно усовершенствовать качество переводов и облегчить дальнейшую переводческую работу.

Ключевые слова: международный стандарт, национальный стандарт, процесс перевода, компетенции переводчика, прослеживаемость терминов.